


2011թ.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- 
- 
- 

# Հայաստանի Հանրապետության գրոսաշրջության բնագավառի վերլուծություն

2010թ.





## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունն իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի զբոսաշրջության վարչության կողմից՝

- Հայաստանի ազգային վիճակագրական վարչության կողմից տրամադրված զբոսաշրջության բնագավառում վարվող պաշտոնական վիճակագրական տվյալների,
- ԱԱԾ կողմից սահմանային անցման կետերում հավաքագրված տվյալների,
- օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տրամադրված տեղեկատվության,
- ՄԱԿ Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության վերլուծությունների և տվյալների հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունը, այդ թվում նաև զբոսաշրջության բնագավառում, վարվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Կոնկրետ ժամանակահատվածի մասով զբոսաշրջության ոլորտի պաշտոնական վիճակագրական տվյալները ավարտուն կերպով հավաքագրված և մշակված են լինում միայն տվյալ ժամանակահատվածի ավարտից 6-7 շաբաթ անց:


Հարկ է նշել, որ զբոսաշրջային արդյունաբերության ողջ բնագավառն արտացոլող տվյալներ՝ ներառյալ տնտեսական ցուցանիշներ, զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության, սեռի և տարիքի, այցելության նպատակի, տևողության և կրկնվողականության, զբոսաշրջային վարքագծի և զբոսաշրջիկների նախասիրությունների վերաբերյալ արողջական վիճակագրական տվյալների հավաքում և մշակում հնարավոր կլինի իրականացնել միայն ՄԱԿ Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված մեթոդաբանությանը համապատասխան զբոսաշրջության սատելիտային հաշվի ներդրման միջոցով:

## 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՄԻՋԱՋՉԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, 2011 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ


Համաձայն ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության՝ համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության վերաբերյալ տեսլականի մինչև 2020թ. ողջ աշխարհում կանխատեսվում է միջազգային զբոսաշրջային այցելությունների քանակի տարեկան 4% աճի տեմպ:

2010թ. համաշխարհային զբոսաշրջային շուկայում գրանցված միտումներն արդեն նկատելի են միջազգային զբոսաշրջային այցելությունների քանակի 6.7% աճ 2009թ. նկատմամբ: Ստորև ներկայացվում է համաշխարհային զբոսաշրջային շուկայում միջազգային զբոսաշրջային այցելությունների տարեկան աճերի իրական պատկերը:

Համաշխարհային զբոսաշրջային շուկայում միջազգային զբոսաշրջային այցելությունները 1995-2010թթ.



Համաշխարհային զբոսաշրջային շուկայում միջազգային զբոսաշրջային այցելությունների ամսեկան աճը 2008-2010թթ. (%)



2010թ. ընթացքում գրանցված միջազգային զբոսաշրջային այցելությունների քանակի աճի դինամիկան խիստ հակասական է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի պատկերին: Ջրոսաշրջային վարքի փոփոխությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնում առավել նպատակային իրականացնել զբոսաշրջային պլանավորումը ճգնաժամի պայմաններում:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից անմասն չի մնացել նաև միջին զբոսաշրջային վարքը: Համաշխարհային զբոսաշրջային շուկայում գրանցվել են միջին զբոսաշրջային վարքի հետևյալ փոփոխությունները՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով.

- Արձակուրդների կրճատում/սահմանափակում/բացառում
- Ջրոսաշրջային ճանապարհորդություններ ոչ զբոսաշրջային սեզոնին՝ առավել ցածր գներով
- Ջրոսաշրջային այցելության միջին տևողության նվազեցում
- Նվազ ամրագրումներ
- Նախապատվության տրամադրում 4 աստղանի և ավելի ցածր կարգի հյուրանոցային տնտեսության օբյեկտներին
- Նախապատվության տրամադրում ցածր արժողությամբ ավիափոխադրողներին:


2011թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հարկ է նշել, որ 2009թ, չնայած հայտնի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին և համաշխարհային զբոսաշրջային շուկայում գրանցված զբոսաշրջային այցելությունների թվի կտրուկ նվազեցմանը մինչև -4% (ՄԱԿ Ջբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության վիճակագրական հրապարակում «Բարոմետրե»), Հայաստանում ներգնա այցելությունների թվում գրանցվել է 3% աճ՝ 2008թ. ցուցանիշի նկատմամբ: 2009թ. Հայաստան են այցելել 575 281, իսկ 2008թ.՝ 558443 զբոսաշրջիկ: Հաշվի առնելով վերջին տասնամյակում Հայաստանում ներգնա զբոսաշրջիկների թվի աճի բարձր տեմպերը (աճի տարեկան միջին տեմպը 20-25%), ակնհայտ է դառնում այնուամենայնիվ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը 2009թ. աճի տեմպի վրա:

## 2011 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային զբոսաշրջային շուկայում միջազգային զբոսաշրջային այցելությունների տարեկան աճերի իրական պատկերը և կանխատեսումը 2011թ. /4-5 % աճ /:



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՆԱ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2001-2010ԹԹ.


Ուսումնասիրելով զբոսաշրջության զարգացման տենդենցները համաշխարհային տնտեսությունում, ակնհայտ է դառնում, որ զբոսաշրջությունը տնտեսության այն կարևորագույն, բարձր եկամտաբեր և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է, որն իր կարևորությամբ ներառված է այնպիսի գլոբալ համակարգերում, ինչպիսիք են կայուն զարգացումը /աղքատության հաղթահարումը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն/ և մշակութային արժեքների փոխադարձ արժևորման համակարգերը, որոնք Հայաստանի պարագայում արդիական և էական նշանակություն ունեն:

Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, պետություն-մասնավոր-հատված-սփյուռք համագործակցության զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է թե քանակական, և թե որակական աճ: Այդ մասին են վկայում վերջին տարիներին կատարված շարունակական այն գործընթացները, որոնք

2011թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

միտված են զբոսաշրջության ոլորտի օրենսդրական, հարկային, ենթակառուցվածքային զարգացումներին: Վերջին 10 տարների ընթացքում Հայաստանի ներս գբոսաշրջությունը բնութագրվում է զբոսաշրջային այցելությունների քանակի կայուն տարեկան աճով: 2001-2010թթ. ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի միջին տարեկան աճը կազմել է 24.3%:

Հայաստան կատարած ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի աճի դինամիկան 2001-2010թթ.



Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2010թ. հունվար-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հանրապետություն են ժամանել 683979 զբոսաշրջիկներ, 2009թ. նույն ժամանակաշրջանի 575281 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 118.9%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 640032 մարդ կամ 2009թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշի աճի տեմպը կազմել է 121.6%: Բերված ցուցանիշների աճի տեմպերը վկայում են, որ տարեցտարի ավելանում է հետաքրքրությունը Հայաստանի որպես զբոսաշրջային երկրի նկատմամբ: Հաշվի

2011թ.


ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

առնելով զբոսաշրջային արդյունաբերությունում ներկայումս իրականացվող պետական և մասնավոր ծրագրերի ծավալները 2011թ. ընթացքում ակնկալվում է զբոսաշրջային այցելությունների քանակի 20 % աճի փոփոխություն

Միաժամանակ, 2010թ. ընթացքում օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տրվել է 24085 հատ ՀՀ մուտքի վիզա: 2010թ. ՀՀ մուտքի էլեկտրոնային վիզա ստացել է 5209 անձ: Ընդհանուր՝ 29294 (24085+5209):

Հիմնվելով այն փաստի վրա, որ մեր երկիրը առաջարկում է հետաքրքիր համադրությամբ զբոսաշրջային արդյունք՝ հարուստ մշակութային ժառանգություն, անաղարտ բնություն, հյուրասիրության հարուստ ավանդույթ, Հայաստանը ունի բոլոր հնարավորությունները գրավելու իր ուրույն դիրքը միջազգային շուկայում: Սա իր հերթին պահանջում է զբոսաշրջային ռեսուրսների պատշաճ և մանրամասն գնահատում, համաշխարհային շուկայում պահանջարկի և հայկական զբոսաշրջային առաջարկի (զբոսաշրջային արդյունք, ծառայություններ) վերանայում, այնուհետև հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում համաշխարհային շուկայի համապատասխանաբար ընտրված թիրախային սեգմենտներում (աշխարհագրական, կրոնական, մշակութային և այլն):

Հայաստանի զբոսաշրջային արդյունքի խթանման համար նպատակային երկրները ընտրվում են վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրությունները և բերված ցուցանիշների աճի տեմպերը վկայում են, որ տարեցտարի ավելանում է Եվրոպական երկրների հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի նկատմամբ: Այսօր Հայաստանի համար ամենամեծ պոտենցիալն են ներկայացնում Եվրոպական երկրներից Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Հունաստանը, Կիպրոս, Չեխիա, Միացյալ Թագավորությունը, Ավստրիան: Համաձայն սահմանային անցման կետերում հավաքագրված տվյալների 2010թ. նկատվել է Եվրոպական տարածաշրջանից Հայաստան այցելությունները զգալի աճ, այն կազմում է 20.78 %:



2009-2010թթ. Եվրոպական երկրներից Հայաստան այցելությունների աճի դինամիկան հետևյալն է, իսկ Սահմանային անցման կետերում 2009-2010թթ. այցելությունները ըստ տարածաշրջանների ներկայացվում են **հավելված 1-ում**:

Սա այն վերապահումով, որ խոսքը գնում է հանգստի համար Հայաստան ժամանող և հայկական արմատներ չունեցող զբոսաշրջիկների մասին, որոնք թիվը համեմատաբար հեշտ է ավելացնել օգտագործելով ժամանակակից աշխարհում օգտագործվող ավանդական և նորարարական մարքեթինգային գործիքները: Միաժամանակ, այստեղ պետք է հաշվի առնել այն, որ շուկայում աստիճանաբար ավելի նկատելի է դառնում նոր երկրներ ու նոր փորձառություններ փնտրելու միտումը: Այս առումով հարկ է նշել, որ 2010թ. այցելությունների աճի միտում է նկատվել այցելություններ Չեխիայից, ինչպես նաև Սկանդինավյան երկրներից / Ղանիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա/:

Ընդհանրապես, Հայաստանի ներգնա զբոսաշրջային շուկայի ամենամեծ սեգմենտներն են հանդիսանում սփյուռքահայերը, որոնք ժամանում են ԱՄՆ-ից, և ՌԴ և ԱՊՀ այլ երկրներից:

ԱՊՀ երկրներից Հայաստան այցելությունները 2010 թ. Կազմել է սահմանային անցման կետերով Հայաստան ժամանումների 17.31 %-ը, որից 25.6 % միայն բաժին

են ընկնում ՌԴ: Միաժամանակ հարկ է նշել, որ ՌԴ ժամանումները կազմել են ընդհանուր ժամանումների 15.85%-ը:

ԱՄՆ –ից ժամանումները կազմել են սահմանային անցման կետերով Հայաստան ժամանումների 1.20 %-ը:

**Հարկ է նշել իրանից Հայաստան կատաված այցելությունները:**

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2010 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրանցի գբոսաշրջիկների թիվը կազմել է 120 863, որոնցից 1-ին եռամսյակում Հայաստան են այցելել շուրջ 28 582, 2-րդ եռամսյակում՝ 19 602, 3-րդ եռամսյակում՝ 52 537, 4-րդ եռամսյակում՝ 20 142:


2009 թվականի ամբողջ տարվա նկատմամբ 2010թ. նույն ժամանակաշրջանում Հայաստան այցելած իրանցի գբոսաշրջիկների հավելաճը կազմում է 27.85 %:

2010թ. մարտ ամսվա ընթացքում Հայաստան այցելած իրանցիների թվի բարձր ցուցանիշը պայմանավորված է վերջիններիս՝ Նովրուզ-Բայրամ տոնակատարությունով: Փաստորեն այդ մեկ ամսվա ընթացքում Հայաստան այցելած իրանցի գբոսաշրջիկները կազմում են նախորդ ամբողջ տարվա ընթացքում Հայաստան այցելած իրանցի գբոսաշրջիկների ընդհանուր թվի 64.52%-ը: 2009թ. 1-ին եռամսյակի նկատմամբ 2010թ. նույն ժամանակաշրջանի հավելաճը կազմում է 37.75%:

Ըստ հյուրանոցային տնտեսությունից ստացված հաշվետվությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների Միջազգային գբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2009-2010թթ. հունվար-դեկտեմբերին

	2009թ. հունվար- դեկտեմբեր	2010թ. հունվար- դեկտեմբեր	2010թ. հունվար- դեկտեմբերը 2009թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
<b>Հյուրանոցների քանակը</b> , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	43	50	116.3
<b>Ժամանակներ</b>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	575281	683979	118.9
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	65638	70209	107.0
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	509643	613770	120.4
<b>Մեկնողներ</b>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	526193	640032	121.6
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից	11234	11031	98.2
ինքնուրույն	514959	629001	122.1


Ինչպես երևում է աղյուսակից, 2010թ. Հունվար-դեկտեմբերին հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանել են 70209 զբոսաշրջիկ կամ Հայաստան այցելած զբոսաշրջիկների 10.2%-ը:



Հարկ է նշել, որ առկա վիճակագրությունը լավատեսության հույս է ներշնչում Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարների վերաբերյալ, այդ թվում և այն, որ ընդլայնվել է այցելությունների աշխարհագրությունը: Հայաստան են այցելում զբոսաշրջիկներ աշխարհի մոտ 80 երկրներից: Ներգնա զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության և այցելության նպատակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները ներկայումս հավաքագրվում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկներից:

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեսլը, %
	2009 թ. հունվար-դեկտեմբեր	2010 թ. հունվար-դեկտեմբեր	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>107.0</b>
այդ թվում՝			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>18.4</b>	<b>21.0</b>	<b>122.3</b>
որից՝			
Ռուսաստանի Դաշնություն	16.2	18.3	120.6
ԱՊՀ այլ երկրներ	2.1	2.7	135.1
<b>Ոչ ԱՊՀ երկրներ</b>	<b>81.6</b>	<b>79.0</b>	<b>103.5</b>
այդ թվում՝			
<b>ԵՄ երկրներ</b>	<b>37.1</b>	<b>31.3</b>	<b>90.2</b>
որից՝			
Ֆրանսիա	13.4	9.4	74.5
Գերմանիա	7.5	5.7	80.9
Միացյալ Թագավորություն	3.3	4.3	136.7
ԵՄ այլ երկրներ	12.8	12.0	100.0
<b>Այլ երկրներ</b>	<b>44.5</b>	<b>47.7</b>	<b>114.7</b>
ԱՄՆ	18.1	14.4	84.7
Իրան	7.7	10.4	144.1
Վրաստան	3.8	3.6	102.0
Թուրքիա	1.2	2.8	242.0
Կանադա	1.9	2.0	113.3
այլ երկրներ	11.7	14.5	132.6


Ըստ հյուրանոցային տնտեսությունից ստացված հաշվետվությունների տվյալների, 2010թ. Հունվար - դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 21.0 % -ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, իսկ 79.0 %-ը՝ ոչ ԱՊՀ երկրներին:



**2010թ. ընթացքում ներգնա զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածությունը հետևյալն է՝**

Ինչպես երևում է պատկերից, ՌԴ, ԱՊՀ երկրները և ԱՄՆ շարունակում են մնալ Հայաստանի զբոսաշրջային հիմնական շուկաները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս երկրներում են առավել մեծ քանակությամբ առկա Հայաստանի համար զբոսաշրջային պոտենցիալ շուկայի մեծ սեգմենտ հանդիսացող սփյուռքահայերը:

Հաջորդ պատկերն արտացոլում է 2010թ. ընթացքում Հայաստան այցելած ներգնա զբոսաշրջիկների այցելության նպատակները



*2010թ. ընթացքում Հայաստան այցելած ներգնա զբոսաշրջիկների քանակն ըստ այցելության նպատակի (արտացոլում է այն տվյալները, որոնք հավաքագրվել են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների մոտ)*

## Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2010թ. հունվար դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կուլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում /կացարաններում/ տեղավորվել են 456432 զբոսաշրջիկներ /ՀՀ ռեզիդենտներ/ ինչը 2009թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 4.8 %-ով:

**Ներքին գրասաշրջությունն ըստ նպատակի**

(մարդ)

	2009թ. հունվար- դեկտեմբեր	2010 թ. հունվար- դեկտեմբեր	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2010թ. հունվար-դեկտեմբեր, %)
<b>Ընդամենը գրասաշրջիկներ<sup>2</sup></b>	<b>435674</b>	<b>456432</b>	<b>104.8</b>	<b>100</b>
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	103154	107104	103.8	23.5
հանգստի և ժամանցի	229303	258872	112.9	56.7
բուժման	54931	50362	91.7	11.0
այլ	48286	40094	83.0	8.8

Տվյալները ստացվում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված գրասաշրջիկներին:

